Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99
ت - 58

3583

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆՍԱՅԵԱՆ

19 NOV 2011

891.99
Ն-58

1001
824

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՍԻՐՈՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ

*Պատկեր*

Տպարան „ՇԻՐԱԿ“ Ալեքսանդրապօլ։
1 9 0 5
(32)

08.04.2013
28628

Дозволено Цензурою Тифлисъ, 29 Августа 1905 г.

# ՍԻՐՈՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ

---

Զատիկ կիւրակի օր է։ Ամբողջ Քրիստոնեայ աշխարհը՝ հարուստ թէ աղքատ Յարութեան տօնի զգացմունքով լցուած, սեղանի շուրջը բոլորած ցնծում են և ուրախանում։

Ծովեզրեայ O. քաղաքի տներից մէկում լսելի էին երիտասարդների ոգևորուած ուռաներ և ցնծութեան աղաղակներ։ Մի փոքրիկ, բայց շքեղ, սենեակում կար խնճոյք, որի հիւրերը բացառապէս կազմում էին ուսանողներ, թւով ինն հոգի։ Նրանցից երեքը այս տարի աւարտել էին համալսարանն ու գնալու էին հայրենիք, այդ պատճառով էլ սարքել էին այս ընկերական խնճոյքը, վերջին զատիկը ուրախ և անմոռաց դարձնելու համար այն երեք աւարտող ընկերների օրերում։

Տան մէջ չ՛կար մատակարարուհի—այլ ամեն մէկն առանց զլանալու կատարում էր թէ հիւրի թէ մատակարարի պաշտօն։ Մսից պատրաստած երկու տեսակ կերակուր, մի երկու շիշ էլ սպիտակ գինի կազմում էին փոքրիկ սեղանի լիութիւնը։ Չը նայած գինու և ուտելե-

գէնի սակաւութեան, նրանք անհամեմատ ուրախ էին, զուարթ. խօսում, ծիծաղում և ճառաբանում էին, կարծես, իւրաքանչիւրը նրանցից խմած լինէր մի քանի շիշ գինի.—նրանք արբած էին ընկերական անկեղծ սիրով և կեանքի մէջ մտնելու խոհերով...

—Խմեցէք, պարոնայք, թող ուրախ անցնի այս Զատիկը, որովհետև աւելի խոր տպաւորուելով ձեր յիշողութեան մէջ, մտաբերէք ձեր ուսանողական կեանքը, ձեր ընկերներին—այսինքն մեզ, գոչեց բարձր ձայնով մի ցածրահասակ սևահեր ուսանող, նայելով անդրանիկ ուսանողներին։

—Կեցցէ՛ եղբայրութիւն, ուսմա՜ն ա...

—Արտէմ, ինչու ես տխուր, լաւ. միթէ քեզ հաճելի չէ այս խնճոյքը, դիմեց նոյն ուսանողը դիմացը նստած գեղատեսիլ ուսանողին, որ այս շրջանաւարտներից մէկն էր լինելու։

—Ոչ, բարեկամ, ես տխուր չեմ, ապագայի մտքերն են շրջապատել ինձ, պատասխանեց Արտէմ Լուսնակեանը ժպտելով ու դատարկելով իւր գինու կիսատ բաժակը։

Երիտասարդները խօսում էին, վիճաբանում, կատակներ անում, երգում ու պարում ջութակի ներդաշնակութեամբ, որ նուագում էր նրանցից մէկը։

Բաւական երկար ժամանակ նրանք զուար-



Լուսնակեանը այլևս չը խօսեց, տեսնելով, որ թշուառ աղջիկը զառանցանքների մէջ էր ընկնում և ջերմը սաստկանում էր. մի կերպ մինչև քաղաքի ծայրը հասցրեց նրան, նստացրեց կառք ու տարաւ իր բնակարանը միաժամանակ պատսպարելու նրան և ապա որևէ կարգադրութիւն անելու։

—Թողէք... ես արդէն կորած եմ... միայն մահը կը մաքրէ ինձ մեղքերից... դուրս էին թռչում զառանցողի քնքոյշ շրթունքներից։

Երիտասարդը նստած նրա մօտ, հետաքրքրութեամբ դիտում էր այդ անյայտ կնոջ դէմքը և ուշադրութեամբ լսում արտասանած բառերը, ուզենալով մի ամփոփ գաղափար կազմել այդ թշուառ կնոջ անցեալի մասին։

Ճրագի լոյսը ընկնում էր մահճակալի վըրայ պառկած կնոջ գունատ երեսին և արտացոլում։ Նա՝ այդ կինը՝ մի նիհար, միջահասակ աղջիկ էր։ Տարիքը քսաներեքից աւելի չէին կարող լինել։ Երեսի գոյնը սպիտակադեղին, սրպէս մաքուր մոմ. շրթունքները բարակ և ալ-կարմիր, այտերը նիհարած ու փոսն ընկած, իսկ աչքերն աւելի խորն էին սեղմուել իրանց վառդակների մէջ։ Բայց դէմքի կանոնաւոր գծագրութիւնը ու նրբութիւնը, շականակագոյն խիտ մազերը, որոնք այժմ անխնամ և կեղտոտ բրբրուել էին ու թափուել այս ու

այն կողմ. վկայում էին, որ այդ չարաբաշ կինը երբեմնապէս եղել է գեղեցկուհի և միայն կեանքի բովի մէջ զանազան հանգամանքների փոփոխութեան ներքոյ, անցել էր նրա գեղեցկութիւնը և մաշուել էր այդ քնքոյշ կազմուածքը։

«Անպատճառ մի մեծ և խորհրդաւոր գաղտնիք կայ այս աղջկայ կեանքի մէջ»—մտածում էր Արտէմ Լուսնակեանը, անթարթ աչքերով նայելով նրա դալուկ, բայց աշխոյժ դէմքին։

Գիշերից բաւական անց էր։ Լուսնակեանի քունը բոլորովին փախել էր նրանից։ Նա միայն հետաքրքրուած էր այդ տեսարանով, որ բոլորովին անսպասելի էր։ Ցերեկուայ ուրախութիւնը յանկարծակի կերպով փոխարինուեց ներկայ թախիծով։

Յանկարծ հիւանդը բացեց աչքերը, նայեց իր շուրջը ապուշի հայեացքով ու սկսեց զննել երիտասարդին, սենեակը, ապա նստեց մահճակալի վրայ ու հարցրեց խելի ձայնով.

—Այս որտեղ եմ ես։

Նա հետզհետէ աւելի սթափուելով նկատեց, որ գտնւում է իրան անծանօթ, մի օտար մարդու մօտ, ուրիշի մահճակալի վրայ և տեսնելով, որ կուրծքը կիսով չափ բաց է, մազերն անկանոն թափթփուած ուսերի վրայ,



ամաչեց ու ինքն իրան ուղղուեց, բարակ կարմիր պատեց նրա այտերին։

—Ոչինչ, օրիորդ, մի վախենայ, մի ամաչիր, դուք ձեր բարեկամի տանն էք գտնւում, հանգստացրեց Արտէմը կարեկցաբար նայելով աչքերին։

Բայց որքան կրակոտ էր և աշխոյժ այդ աղջկայ հայեացքը, նրանց մէջ կար ապրելու տենչանք։

Երիտասարդը ցնցուելով այդ հայեացքից, գլուխը դարձրեց միւս կողմը։

—Այս ինչու եմ եկել այստեղ, երբ եմ եկել, հարցրեց աղջիկը քնքոյշ ձայնով։

—Երեկոյեան դուք գտնւում էիք ծովափում, յանկարծ վատ զգացիք ձեզ և ես կառքով բերեցի այստեղ իմ բնակարանը, որովհետև ձեր տունը չը գիտէի։

Մի քանի վարկեան լուռ մնաց աղջիկը և ուղիղ նայելով Արտէմի երեսին, բացականչեց վրդովուած.

—Այո՛, յիշեցի՛, բայց ինչո՞ւ չը թողիք ինձ հանգստանալ ծովի խորքում. դուք ոչ թէ բարութիւն արիք ինձ, այլ չարութիւն։

—Երանի գիտենամ, թէ այն ինչ մեծ վիշտ է, որ վաղաժամ պատել է ձեր անմեղ սրտին ու թունաւորում է...

—Ես... ես մի կորած արարած եմ...

յանկարծ հեկեկաց նա և ձեռքերով ծածկեց երեսը։

Արցունքները խոշոր կաթիլներով դուրս էին ցայտում նրա աչքերից և գլորւելով այտերի վրայից, թափւում էին գիրկը։ Նա լալիս էր և հեկեկում, և այդ լացը կարծես, թեթևացնում էր՝ նրա սրտին պատած վիշտը։

«Խեղճ աղջիկ, եարաք սիրել է և դաւաճանել. եարաք խաբւել է մի անազնիւ տղամարդուց, որ գուցէ բարոյապէս այլանդակել է ու փախել եարաք...» և այսպիսի շատ ենթադրութիւններ էին ծագում Լուսնակեանի մէջ։ Նրա սիրտն էլ յուզւում էր հետզհետէ և նա ցանկութիւն էր զգում աղջկայ ցաւին կից լինել, լալ, բայց զսպում էր իրան։ Նա ուզում էր մխիթարել այդ թշուառին, չորացնել նրա արցունքները. բայց չը գիտէր ինչպէս, ինչ անէր, քանի որ բոլորովին ծանօթ չէր այդ աղջկայ գլխովն անցածի հետ, տեղեակ չէր նրա յուսահատութեան ու ծովն ընկնելու պատճառներին։

—Եթէ գիտենայիք, ազնիւ երիտասարդ, թէ ով է այս րոպէիս ձեր սենեակում նստած, ինչպիսի մի անարժան աղջկայ էք պատսպարել... եթէ գիտենայիք, դուք ինքներդ ծովը կը նետէիք, խօսեց նա սրբելով աչքերը դէյ-րո՞յի փէշերով։



—Ընկածին միշտ պէտք է օգնել և բարձրացնել,—բայց չէ՞ կարելի, որ պատմէք ինձ ձեր մասին։

—Ո՛հ, շատ ծանր է ինձ համար յիշել իմ անցեալը, պատմել ամեն ինչ, ասաց նա և կրկին լաց եղաւ։

—Ոչինչ, օրիորդ, մի թաքցնէք վէրքերը, որ բուժող լինի. իմ կարողացածի չափ ես կ'օգնեմ ձեզ թէ բարոյապէս և թէ նիւթապէս։

Աղջիկն սկզբում դժուարացաւ հաւատ ընծայել այդ երիտասարդին, բայց մի ընդհանուր հայեացք ձգեց նրա երեսին, և կարծես համոզւեց, որ դիմացինը իրօք ազնիւ տղայ է. ապա սրբեց արցունքը, ուղիղ նստեց մահճակալի վրայ, մաքրեց կոկորդը և սկսեց պատմել կանացի վշտաբեկ ձայնով։

—Ես Թիֆլիսեցի հայ օրիորդ եմ։ Ծնողներիս աղքատութեան և անտարբերութեան պատճառով ես չստացայ մի լաւ դաստիարակութիւն։ Դեռ մանուկ հասակումս ընկնում էի տղաների հետ, սիրում էի բոլորի հետ դէս ու դէն ընկնել. գրօսնել, մտնել մութ խորշեր, համբուրւել, խաբել մէկին և անցնել միւսին։ Այդ սկզբնական անմեղ յանցանքները հետզհետէ արմատացան իմ մէջ և ես մեծ հասակումս էլ շարունակեցի սիրաբանութիւնները թողնելով ընթերցանութիւնն ու լուրջ զբաղմունքնե-



1001
824

րը։ Այդ ժամանակներում ինձ վրայ սիրահարուեց մի գիմնազիաւարտ ազնիւ երիտասարդ, որ չը գիտենալով իմ ներքին աշխարհը, սիրում էր իդէալական սիրով, պաշտում էր ինձ, բայց ես նրան էլ խաբեցի...

Լացը խեղդեց աղջկայ կոկորդը և նա կանգ առաւ։ Երեւում էր, որ այն երիտասարդի ազնուութիւնն ու սէրը ապագայում շատ թանգ էր գնահատել իր համար, որից, դըժբաղդաբար այժմ զուրկ էր։

—Այո, նա, այն ազնիւ երիտասարդը, ինձ սիրում էր, բայց ես առօրեայ սիրով էի կապուած նրա հետ։ Ուզում էի սիրել նրան, նուիրել նրան իմ սիրտը, բայց ափսոս, որ սիրտս փչացել էր, նեխուել էր. իսկ թէ ով էր մեղաւոր, այժմ էլ չեմ կարողանում վճռել այդ հարցը։ Վերջ ի վերջոյ նա ինձ բռնեց դաւաճանութեան րոպէին ու հեռացաւ ինձնից և մինչև օրս էլ չգիտեմ ուր։ Ես էլ նրանից յետոյ միքանի ամիս շատ միամիտ տղաների յետոյ, սթափուեցայ, զգացի իմ սխալը, բայց ուշ էր... Արդէն ամբողջ քաղաքը գիտէր, ճանաչում էր ինձ, և ես նկատում էի, որ բոլորն էլ վատ աչքով էին նայում ինձ, խորշում էին ինձանից... Եւ ես վըճռեցի հեռանալ այն տեղից, որտեղ որ ես, չը գիտեմ ինչու, չեղուեցի ուղիղ ճանապար-



հից... Գնացի օտար քաղաքներ, մտայ տների մէջ ծառայութեան իբր կար անող, երեխաների պահող, լուացք անող... Մ. քաղաքում ինձ սկսեց հետևել մի երիտասարդ, ո հաշուապահ էր մի առևտրական տան մէջ։ Երկար հետևելուց յետոյ նա ծանօթացաւ ինձ հետ, ցոյց տուեց իրան ազնիւ սէր, համոզեց ինձ իր հետ ապրել և յետոյ ամուսնանալ միասին։ Ես կնոջ յատուկ բնաւորութեամբ շատ համոզուեցի. սակայն մի օր պարոնը տեղափոխուեց քաղաքից առանց ինձ յայտնելու։ Ես մնացայ Մ. քաղաքը, այդտեղ էլ մի ուսանող ինձ հըրապուրեց իր խօսքերով և յետոյ, մի՛ս, էլ ինչ ասեմ... էլ ինչպէս պատմեմ...

Արտէմ Լուսինակեանի դէմքը հետզհետէ խոժոռանում էր. նրա հեզ ճակատի վրայ մէկմէկի յետևից երևան եկան կնճիռներ, որ մռայլեցրին նրա պայծառ երեսը, աչքերը մի տեսակ անհնդային արտայայտութիւն ստացան և հայեացքը դարձաւ կրակոտ. սիրտը սկսեց արագ թրթռալ, ինչպէս մի մարդու, երբ տեսնում է կատաղի թշնամուն և լսում նրա կատաղեցնող խօսքերը։

Ինչու այսպէս այլայլուեց երիտասարդը, արդեօք այն բանի դէմ, որ միքանի ստոր մարդիկ օգտուել էին այս մոլորած աղջկայ սխալմունքից և ոտնատակ արել նրա պատիւը, թէ

անցեալ հին-հին դարի յիշողութիւններ արթ-նացան նրա մէջ այդ դժբախտ աղջկայ յուզիչ պատմութիւնից։

Աղջիկը նկատում էր երիտասարդի փո-փոխութիւնը և այդ ընդունելով ազնիւ սրտի արդար բարկութիւն մարդկային վիճակի կոր-ծանիչ երևոյթների դէմ, աւելի խրախուսուում էր և պատմութիւնը շարունակում աւելի հա-մարձակ, կարծես աշխատում էր, որ գոնէ կեանքը հանգչելուց առաջ թափել իր սրտին ծանրացած վշտերն ու տառապանքները մի այնպիսի երիտասարդի առաջ, որին՝ իր թա-փառական ու փախստական կեանքի ընթաց-քում առաջին անգամ հանդիպեց, որպէս բա-րոյական ազնուասիրտ մարդու։

—Այնտեղից խելայնոր թափառաշրջիկի նման եկայ այս քաղաքը. շարունակեց նա մա-զերը ուղղելով. շատ ժամանակ չէ անցել, ըն-դամենը հազիւ երեք ամիս։ Ճանապարհին՝ եր-կաթուղու մէջ ծանօթացաւ ինձ հետ մի անձ-նաւորութիւն, որ իրան ցոյց տուեց մի լուրջ, համեստ մարդ։ Նա հետաքրքրուեց ինձանով, լսեց իմ կեանքի տխուր արկածները, ապա խոստացաւ օգնել ինձ, բժշկել ջղային հիւան-դութիւնից, որ ստացել էի շափազանց վատ պայմաններից, յետոյ ինձ հետ ամուսնանալ։ Ես դարձեալ հաւատացի նրան (և ստիպուած



էի հաւատալ, որովհետև գնում էի միանծա-նօթ քաղաք, որտեղ ինձ շուտ կը խաբէին)։ Ես չիմացայ, թէ նա իրօք ինչ պաշտօն ու-նէր կամ թէ ումից էր փող ստանում, միայն այնքան հասկացայ, որ նա մեծ գործեր ունէր, շատ փող էր ընկնում ձեռքը։ Երեք ամիս նը-րան հաւատարմութեամբ և անձնազոհութեամբ ծառայեցի իբրև նրա կար անող և գրագիր։ Բայց աւա՜ղ, այսօր ճաշից յետոյ ես մի անծա-նօթ տղայի ձեռքով ստացայ այս նամակը։

Նա ձեռքը տարաւ գրպանը և հանեց մի տրորուած նամակ և տուեց Լուսնակեանին, որ անշարժ լսում էր։ Սա դանդաղ շարժումով վերցրեց նամակը և կարդաց իր մտքում։ Ահա նամակի բովանդակութիւնը։

«Սիրելիս, ներիր, որ ինքս վերջին անգամ
«չեմ այցելում քեզ, ինձ համար դա շատ ան-
«յարմար է. ես երէկ նշանուեցի և շուտով
«պէտք է պսակուեմ։ Դու ինքդ համաձայն
«կը լինես, որ մեր մէջ եղածը պէտք է վերջա-
«նայ առ միշտ»։

Երիտասարդը կարդալով այս նամակը ա-ւելի յուզուեց. նա իսկոյն ճմռթեց և շպրտեց յատակին, ասելով.

—Սրիկա՜յ...

Աղջիկը շարունակեց.

—Ես էլ համոզուեցայ, որ էլ չկայ ինձ

փրկութիւն, որ այլեւս ոչ մի մարդ չի համակրի ինձ, չի հաւատայ անկեղծութեանս, և որ անցեալս շարունակ պիտի ճմլէ ու մաշէ սիրտըս, վճռեցի վերջ դնել կեանքիս. այսպէս պէտք է ես անբարոյականութեան գինէի...

—Ոչ, ոչ այդպէս չէ լինելու, դեռ կարելի է քեզ փրկել, յանկարծ ընդհատեց նրան երիտասարդը, և ընկաւ մտածմունքների մէջ։

—Ի՞նչ փրկութիւն, դառն կերպով ժըպտաց աղջիկը, որի ժամանակ նրա նիհար-տըժգունած դէմքի վրայ արտացոլուեց նրա ներքին յուսահատութիւնը.—Ինչ էք ասում, դուք ուզում էք իմ տառապալից կեանքս էլ երկարացնել։ Դուք իմ փրկութեան մասին էք մտածում, իսկ «նա», այն ամենի երեցած պարոնը ինձ ում էր ուղարկում, ո՛հ, անգութ բաղդ,.. լաւ է ծովի կլանող ալիքների մէջ գտնեմ իմ հանգիստը, քան այս աշխարհում ապրեմ իբրև ստոր արարած...

Նա սկսեց լալ և հեկեկալ. Նա գլուխը խոնարհեցրեց և երեսը ծածկեց ձեռներով. արցունքները յորդառատ կերպով թափւում էին նրա գիրկը, արտասունքի այդ խոշոր կաթիլների մէջ, փայլում էր նրա զղջումը, իր անցեալ կեանքի համար և բարոյականութեան նախանձախնդրութիւնը։

Նրա հեկեկանքը դուրս էին գալիս վըշ-



տաբեկ սրտի խորքերից ու տարածուելով փոքըր սենեակի լռութեան մէջ սարսեցնում էին թէ երիտասարդին և թէ պատերին։

Երիտասարդի աչքերից էլ դուրս ցայտեցին երկու խոշոր արցունքներ, որոնք կարեկցական և մարդասիրական զգացմունքներից էին բղխում. Նա մօտեցաւ զղջացող կնոջը, սկսեց ուղղել նրա թափթփած մազերը, իր թաշկինակով մաքրելով նրա արցունքները և հանգստացնելով նրան։

—Թողէք, իմ հանգիստս միայն ծովումն է, յանկարծ բացականչեց աղջիկը և խելագարի նման վեր ցատկեց մահճակալի վրայից, ուզեց դուրս սպրդնել, բայց երիտասարդը պինդ բռնեց և չը թողեց։

—Նստեցէք, օրիորդ, մի յուսահատուէք, քաջութիւն ունեցէք դիմանալ բաղդի հարուածներին. դուք անբարոյական չէք, դուք սկզբից մոլորուել էք և անազնիւ «մարդ» կոչուած արարածներ օգտուել են ձեր մոլորուելուց և խաբել ձեզ... ոչինչ, կարելի է վերականգնել պատիւն ու սրբութիւնը...

Բայց ինչպէս, հարց տուեց ինքն իրան Արտէմ Լուսակեանը։ Եթէ թողնել նրան դառձեալ բաղդի քմահաճոյքին, կրկին նրան կը խաբեն, կը չեղեն ուղիղ ճանապարհից, և վերջնական բարոյական հարուածը կը տան այս

թշուառին։ Սա արդէն զզուել է անցեալ վատ կեանքից ու փնտռում է մի բարոյական հանգիստ։ Արդեօք լաւ չի լինի, որ ինքը պահէ իր մօտ մինչև աւարտելը ու վերադառնալիս տանէ Թիֆլիս քաղաքը, նրան իրանից մօտ պահէ իբրև մի գուվերնանդկա։ Եւ արդեօք, գաղափարական բայց չի՞ լինի, որ ինքը սիրելով նրան ամուսնանայ նրա հետ։ Չէ՞, որ ինքը ուզում է գաղափարական մարդ լինել, չընկնել ձևականութեանց ու հարստութեան յետևից։ Հայր ծնողներն ու բարեկամները ինչ կասեն, արդեօք չե՞ն բարկանալի նրան։ Այսպիսի խառն մտքերով շրջապատուած հանդերձ, նա գուրգուրում էր օրիորդին, հանգստացնում ու յուսադրում։

—Ա՜խ, երանի ես այն երիտասարդին հանդիպէի, սիրէի մաքուր սիրով և ես այժմ կը լինէի աշխարհիս երջանիկներից մէկը։ Երանի գիտենայի թէ՞ որտեղ է նա, ինչ է անում, գնայի, նրանից ներողութիւն հայցէի, ասէի որ «միայն դու ես ազնիւ մարդ աշխարհումս, ես անարժան-գտնուեցայ քեզ» և ապա ստանալով նրանից թողութիւն, հէնց նրա մօտ կեանքիս վերջ դնէի...

—Ո՞վ էր այդ երիտասարդը, անունն ազգն ինչ էր։

—Չեմ ուզում նրա սուրբ անունը պղծել



իմ կեղտոտ շրթունքներով, պատասխանեց աղջիկը իր փէշերով սրբելով երեսի թացութիւնը։

—Իսկ ինչ է ձեր ազգանունը։

—Հոփսիմէ Կուսօնեան, եղաւ մի երկչոտ պատասխան։

—Ի՞նչ, ինչ, Հոփսիմէ Կուսօնեան, այդ դո՞ւ ես Հոփսիմէ, յանկարծ կայծակնահարի նման յետ քաշուեց երիտասարդն երկու ձեռքով բռնելով ճակատը և սաստիկ կնճռոտուելով։

Օրիորդն մի քանի վայրկեան զննեց երիտասարդին և իսկոյն ընկնելով նրա ոտները, աղիողորմ արտասուելով հեկեկաց.

—Ա՜խ, իմ աննման Արտէմ, դո՞ւ ես, երազում եմ արդեօ՞ք...

Մի քանի րոպէից յետոյ Լուսնակեանը՝ սթափուած անսպասելի իրականութիւնից, ձեռները գլխին դրած, ճակատի վրայ կնճիռներ կիտած, աչքերը բարկութեան կրակով լցուած և հայեացքը ձգած Հոփսիմէի վրայ անշարժ կանգնած էր։

Իսկ Հոփսիմէն չոքած նրա առաջ, իր յորդառատ արտասուներով թրջում էր նրա ոտները ու ինչ որ անկապ մրմնջում։

—Ներիր... ես մեղաւոր եմ... փոքր ինչ յետոյ լսուեց հեկեկանքից խեղդուող թոյլ կոկորդից։

—Ի՞նչ, ներել, բայց արդեօ՞ք դու այն

Հռիփսիմէն ես, որ իմ կեանքի ոսկէդարում եռանդս պահպանեցիր ուսմանս մէջ, տարիս կորցնել տուիր ու յետոյ խաբեցիր. ոչ, ոչ, դու «նա» չես։ Ա՜խ, երանի չը հանդիպէի...

—Ես եմ, ես եմ այն անարժան Հռիփսիմէն, որին դու անկեղծ սիրեցիր, բայց նա... նա... չը... գնահատեց քեզ...

Արտասուքը խեղդում էր նրան։

Երիտասարդը բռունցքները սեղմած՝ կանգնած էր սեղանի մօտ, կարծես ամէն վայրկեան պատրաստ էր յարձակուել նրա վրայ ու ոչնչացնել...

—Ես կը սիրեմ քեզ ու կը պաշտեմ, ասաց Հռիփսիմէն և վեր ցատկելով չոքած տեղից ընկաւ նրա վզովը...

—Հեռու կորիր, գոռաց Լուսնակեանը և այնպէս ուժով հրեց նրան, որ նա յետ-յետ գնալով, ընկաւ մահճակալի վրայ։

—Ոչ ոչ. հէնց այժմ պէտք է վճռուի իմ «լինել, չը լինել»ս, պէտքէ կամ մեռնեմ ու ոչնչանամ։

—Ես հաշիւ չունիմ քեզ հետ, ուր ուզում ես գնա, յարեց երիտասարդը սառնարիւն կերպով։

—Քո մէջ էլ մեռած են խիղճն ու մարդասիրական զգացմունքները, ուրեմն թող իմ տառապեալ կեանքիս ճրագը ժամ առաջ հանգչի ծովի խորքում...



Նա կրկին վեր ցատկեց տեղից, դիմեց դէպի դուռս, բայց երիտասարդը արգելեց նըրան ասելով.

—Սպասիր։

Նա կանգնեց աղջկայ դիմաց և սկսեց դիտել նրան, կարծես, ուզենալով համոզուել, թէ իրականութիւն է արդեօք կատարուածը. իրօք Հռիփսիմէ Կուռօնեանցն է սա, որին սիրել, նուիրել էր իր առաջին սէրը։ Նայում էր նա լուռ ու մռայլ աչքերով դիտում էր նրան... Այո, դա իրօք Հռիփսիմէն էր, բայց փոխուած. նրա նիհարացած ու դժգունած այտերը փայլում էին ճրագի թոյլ լոյսի տակ, այտոսկրները և քունքը դուրս էին ցցուել, աչքերը նոյնն էին, նոյն վառուած ու գրաւիչ հայեացքը, միայն ժամանակի վատ ազդեցութեան կնիքն էր աւելացել արտայայտութեան մէջ։

«Նա է, Հռիփսիմէն է» մտածեց Արտէմը, բայց ի՞նչ անել, դո՞ւրս անել նրան—նա ջուրը կընկնի, և իր խիղճը կը տանջէ իրան, որ չը ներեց զղջացած աղջկան. ներե՞լ,—դա էլ շատ դժուար էր. դրա համար հարկաւոր էր մոռանալ անցեալը, մանաւանդ Հռիփսիմէի պատմած անցեալ կեանքը, կռիւ մղել ծնողների և աղէտ հասարակութեան դէմ, որոնք կը բարկծէին իրան՝ այդ ընկած աղջկան հովանաւորելու համար...

Կնճիռները մերթ երևում էին նրա ճակատին, մերթ անյայտանում զուարթ թողնելով նրա երեսը, ինչպէս խաւար ամպերը ծածկում են պայծառ երկինքը և ապա հեռանում։

—Դու ինձ սիրեցիր, հոգիս, խօսեց Հռիփսիմէն, զոհեցիր քեզ ինձ նման մի անարժան, ստոր աղջկայ համար, բայց ես, ես... անարագըս... չը գնահատեցի քո ազնիւ սէրդ, խաբեցի, դաւաճանեցի քեզ... այո, դա... ւա... ա... ճա... նե... ցի...—արցունքները և հեկեկանքը դարձեալ խանգարեցին նրան պարզ արտասանելու բառերը, և նա թոյլ ու կտրւող ձայնով միայն մրմնջում էր,—դու ինձ թողիր, եկար ուսումդ շարունակելու, իսկ ես սրան նրան խաբեցի և վերջը դարձայ մարդոց խաղալիք... որոնք փոխանակ ինձ օգնելու, բարձրացնելու, աւելի հարուածեցին դէպի կեղտը, և ես կամաց-կամաց մոռացեցի քեզ քո մաքուր սիրտդ ու սկսեցի տանջուել խղճիս խայթից...

Նրա ձայնը կտրուեց, նա լռեց մի փոքր և մնաց անշարժ. նրա աղերսալի խօսքերն ու սրտամորմոք արցունքները խղճահարեցնում էին երիտասարդին, որ յառած աչքերով, անշարժ նայում էր նրան և մտածում...

Ա՜խ, երանի թէ մի փոքր ուշ հեռացնէիր ինձ-քեզանից, գուցէ դու քո սուրբ սիրով և



ազնիւ վարքով ինձ ուղղէիր, կապէիր քեզ հետ և երջանկացնէիր. և այժմ, այժմ... Հռիփսիմէ Գուռօնեանը այս օրում չէր լինի... Ո՜հ, անգութ ծնող, առաջին մեղաւորը դու ես, դու որ քո ծնողական պարտքը չէիր կատարում, չէիր հետևում քո Հռիփսիմէի վարքին, քարասիրտ մայր...

Արտէմ Լուսնակեանը ուզում էր խօսել, մի բան ասել նրան, բայց լեզուն կապուել էր, նա մնաց լուռ և անշարժ, և միայն անթարթ աչքերով նայում էր աղջկան ու լսում նրա խօսքերը, որոնք բղխում էին անկեղծ սրտից։

—Այժմ, սիրելի Արտէմ, ես անդունդի եզերքին եմ կանգնած ու քեզ օգնութեան եմ կանչում,—մի քայլ այն կողմ, և ես յաւիտեանս կորած եմ. իմ փրկիչը դու պիտի լինիս. ինչպէս մեկնեցիր ձեռդ և ազատեցիր ինձ ծովի ալիքներում անյայտանալուց, այնպէս փրկիր ինձ բարոյապէս, և ես կը պաշտեմ քեզ իբրև փրկչի։ Մոռացիր ամեն ինչ, ես փոխուեցի, վերածնուեցի հոգով և մարմնով. այլ ես այն Հռիփսիմէն չեմ. ես այժմ ուրիշ մի կին եմ, քո «ներում»-ն ինձ կը փրկէ, և քո «ոչ»-ն ինձ վերջին հարուած կը տայ ու կը գլորէ յաւիտենական խորխորատ...

«Ներել, ներել» շշնջում էին նրա ականջին թէ սենեակին՝ իր ականատես չորս պատե-

բով, և թէ սենեակի անպաճոյճ կահկարասիքը։ Մի ներքին ձայն էլ դրդում էր նրան ու ստիպում լսել այն թշուառ աղջկան, որին նրա ազնուօրմ արցունքները և ձեռից բռնել, վեր բարձրացնել։ Չէ՞ որ ինքը աղքատամիտ երիտասարդ է, զգայուն և գթասիրտ, ինչու արհամարհէ զղջացող կնոջ արցունքներն ու աղատանքը, չէ՞ որ ինքը միշտ բարոզել է ընկերներին ներողամտութիւն և մարդասիրութիւն, ահա և դէպք, որտեղ ինքը պէտք է ներողամտութեան ու մարդասիրութեան ամենամեծ բաժին անէ. Նա սիրե՞լ է այդ աղջկան, զգուել, համբուրել, բայց անընդհատ հանգամանքները աղջկան ուրիշ ուղղութիւն տուին մինչև այժմ. Իսկ այս ժամից սկսեալ նոյն աղջկայ սիրտը վերածնուեց ու սկսեց բաբախել միմիայն այս երիտասարդի համար, որից և սպասում է փըրկութիւն։

Այժմ արդէն մի վերջնական մեծ պատերազմ սկսուեց Լուսնակեանի զգացմունքների մէջ։ Նրա արտայայտութեան փոփոխութիւնները ցոյց էին տալիս ներքին տարուբերումը։

Եւ վերջապէս, յանկարծ անհետացան նրա ճակատի վրայի կնճիռները և նրա հայեացքը փայլեց ներողամտութեան ու մեծահոգութեան զգացմունքների յաղթանակով։

—Բարձրացի՛ր յատակից, Նստի՛ր աթոռի



վրայ, ասաց երիտասարդը երկար լռութիւնից յետոյ, բռնելով Հռիփսիմէի դալկացած, ուժասպառ բազուկը և վեր բարձրացնելով։

—Ներում եմ... քեզ... շարունակեց նա. թո՛ղ այդ օրինակ են տամ, որ կարելի է տարիներով բարոյապէս ընկած, անառակացած կնոջը ներել և սիրել, երբ նա զղջում է ի խորոց սրտէ։ Իհարկէ շատ և շատ նախատինքներ են սպասում ինձ իմ հայրենիքում այս քայլիս համար, ծնողներիս հետ դեռ ընդհարումներ կ՚ունենամ, բայց ոչինչ, զգում եմ, որ արդար գործ եմ կատարում։

—Ո՜հ, փրկիչս, կեանքս, աղաղակեց բերկրանքով լցուած Հռիփսիմէն և արագութեամբ փարուեց նրա վզովը, և պինդ սեղմելով նրա կրծքին, հպեց իր չարքաշ՝ դալկացած երեսը նրա երեսին ու սկսեց արագարագ համբոյրներ քաղել...

—Մեծահոգի արարած, սիրելի ու պաշտելի էակ, ես միայն ներումն եմ խնդրում, դու աւելին ես անում, շշնջում էր նա երիտասարդի ականջին, պինդ սեղմելով նրան և աչքերից թափելով ուրախութեան արցունքներ։

Արդէն Լուսնակեանը, որ մինչ այդ րոպէին զզւում էր այդ աղջկանից, այժմ՝ համբուրում էր նրան սիրով և մեծ խանդով, համբուրում էր աւելի մեծ ծարաւով, քան թէ

6-7 տարի առաջ «օրխորդ» Հախիախմէլին էր գրկում ու համբուրում։

Ներեցի, Հախիախմէ, և կ'աշխատեմ մոռանալ քո նողկալի անցեալը, բայց...

Նա դարձեալ կճմռուեց ու մռայլուեց։

—Մի կասկածիր իմ մասին մազաչափ անգամ, հոգիս։ Ես կը սիրեմ քեզ, ես կ'աստուածացնեմ քեզ մինչև մահ-գերեզման։ Եւ եթէ դու իմ մէջ մի վատ հակում տեսնես, քո այժմեան ներողամտութիւնն ու մեծահոգութիւնն ատրճանակի մահացուցիչ հարուածով փոխարինիր։

—Մենք կ'ամուսնանանք, վերջնական վճիռ տուեց Արտէմ Լուսնակեանը։

Միւսի օրից նրանք պսակուեցին և սկսեցին իրանց նոր կեանքով մոռանալ տալ բոլոր դժբախտ անցեալը...

Վերադառնալով հայրենիք Արտէմ Լուսնակեանը դարձաւ հասարակական անդամ, նրա ազնիւ մշակ. իսկ տիկին Հախիախմէն սկսեց ինքնակրթութեամբ նախապատրաստուել խոկական մայր և տանտիկին լինելու համար...

—ՎԵՐՋ



ճայռն։ Արևն արդէն իջնում էր իր գիշերնոցը։

Ահա տարի կանգնեց շրջանաւարտ Արտէմ Լուսնակեանը և սկսեց ճառել։

Նա խօսում էր և հետզհետէ ոգևորւում։ Խօսքերն ու մտքերը յորդառատ դուրս էին հոսում նրա բերանից։ Երևում էր, որ նրա ամէն մի խօսքը դուրս էր գալիս նրա երիտասարդ սրտից, անխառն հոգու խորքերից։ Նա խրախուսում էր ընկերներին, տալով ապագայի համար խորհուրդներ։ Պատկերացնում էր ժամանակակից երիտասարդութիւնը, քննում էր նրա ձգտումները, շեշտելով, որ մեծ ամասնութեան ձգտումն է պատարկ դիպլոմներ ստանալը, և նրանք առանց մտաւոր պաշարի՝ ստանալով դիպլոմները, մտնում են կեանք և գործում միայն իրանց անձնական շահերի համար։ Լուսնակեանը բարեմաղթեց և ցանկացաւ, որ իրանք լինեն լաւ մարդիկ և գործեն յանուն գաղափարի հասարակութեան համար։

—Կեցցէ Լուսնակեան, կեցցէ, ուռռա՜, թնդաց սենեակը նրա ճառից յետոյ։

Մի փոքր յետոյ նա հրաժեշտ տալով ընկերներին, դուրս եկաւ ու դիմեց իր բնակարանը մի փոքր հանգստանալու։

Իսկ խնճոյքը շարունակուեց մինչև ուշ գիշեր։

Արտէմ Լուսնակեանը մի խեղճ ընտանիքի զաւակ էր, հայրը՝ երբեմնապէս գործունեայ գործակատար առեւտրական ասպարէզում, այժմ ծերացած զառամեալ տանը նստած էր և օրէցօր սպասում էր մահուան։ Մայրն էլ արդէն բաւականին ծեր էր և հազիւ էր կարողանում կատարել տնային աշխատանքը։ Չը նայած, որ այս երեքն էին տան անդամները, բայց և այնպէս շատ դժուարութեամբ էին հայթայթում իրանց օրական պարէնը։ Նրանց օգնում էր մի հարուստ ազգական, որ և Արտէմի գիմնազիայի վարձն էր վճարում։

Արտէմը վերջին դասարանումն էր, երբ սիրահարուեց մի օրիորդի հետ, Հռիփսիմէ Կուռօնեան անունով, որ նոր էր աւարտել կրօյկան։ Նա այն աստիճանի տարուեց այս օրիորդով, որ չը նայելով իր ընդունակութեանը և յառաջադէմ լինելուն նախընթաց բոլոր դասարաններում, վերջին դասարանը շատ դժուարութեամբ աւարտեց։ Շուտով նրանք յայտնեցին միմեանց իրար սէրը և խօսք տուին ամուսնանալու։ Արտէմը, որ գիշեր ցերեկ երազում էր բարձրագոյն դպրոց մտնելու մասին, այժմ մոռացաւ ուսումը և ամեն ինչ, ու յափշտակուեց Հռիփսիմէով։ Բոլորեց մի ամբողջ տարի Արտէմի գիմնազիան աւարտման օրից, և նա համարելով իրան երջանիկ մարդ, սկսեց հոգալ



ամուսնութեան մասին։ Բայց հետզհետէ նա նկատեց, որ Հռիփսիմէն չի կարող իր սիրոյ առարկան լինել… Հռիփսիմէն հէնց մանկութեան հասակից վատ ուղղութիւն էր ստացել։ Նրա ծնողները, վարժուհիները և բարեկամները լինելով տգէտ, չէին կարողացել փոքրիկ Հռիփսիմէի մէջ ներշնչել բարոյականութեան սկզբունք։ Եւ Հռիփսիմէն գիշեր-ցերեկ ընկնելով տղաների հետ, սկզբում պատանեկան անմեղ սիրաբանութիւններով էր զբաղւում, բայց յետոյ «հանաքը չանաքի փոխուեց»—և Հռիփսիմէն դարձաւ լկտի տղաների զուարճութեան առարկայ… Հանդիպելով Արտէմ Լուսնակեանին նա գրաւուեց նրա գեղեցկութեամբ և ըստ իր բնաւորութեան սկսեց սիրել ու սիրուել նրա հետ։

Նա Արտէմ Լուսնակեանի հետ էլ այնպէս էր զուարճանում, ինչպէս ուրիշ տղաների հետ, բայց և այնպէս զգում էր, որ այս երիտասարդը շատ բարձր էր իր «սիրելիներից», որ ազնիւ էր ու խելօք, որ սա սիրում էր իրան՝— Հռիփսիմէին անկեղծ սիրով, և ահա հէնց այս ազնիւ յատկութեանց առաջ Հռիփսիմէն ակամայից ընկճւում էր ու պատկառում Արտէմից, ցոյց տալով իրան իբր բարոյական և պարկեշտ սիրող։

Վերջապէս Հռիփսիմէն արդէն կշտացաւ

Նրանից, արդէն մի տարուայ քաղցր զրոյցները, սիրային համբոյրները և ամենօրեայ տեսակցութիւնները յաջեցրին Հռիփսիմէի հաճոյքներին։ Եւ երբ զանազան աննպաստ լուրերից գրգռուած սկսեց հետևել իր սիրած Հռիփսիմէին, և մի օր բռնեց նրան մի այլ երիտասարդի հետ համբուրուելիս,—այդպիսով պարզուեց նրա համար, որ Հռիփսիմէն միայն կերպար ու կեղծ սիրով էր կապուած իր հետ մինչև այժմ։ Այնուհետև նա փոխանակ վրէժխնդիր լինելու Պուռօնեանից, զսպեց իրան և բոլորովին հանգցնելով իր սրտի սէրը դէպի անարժան Հռիփսիմէն ու խզելով նրա հետ ունեցած բոլոր կապերը, աշնան սկզբին ճանապարհուեց դէպի Ռուսաստան ուսումը շարունակելու, նոյն իր ազգականի հաշուով։ Իսկ օրիորդ Հռիփսիմէ Պուռօնեանը մի քանի ամիս յետոյ ամուսնացաւ մի երիտասարդի հետ, և ոչ որ չիմացաւ, թէ ուր գնաց նա...

Այն օրից անցել էին հինգ բոլորակ տարիներ, և այժմ Արտէմ Լուսնակեանը բոլորովին մոռացած իր առաջին սիրաթափութիւնը, աւարտում էր համալսարանը, և նոր իղձերով ոգևորուած, վերադառնում էր հայրենիք գործելու համար։



Բայց դեռ վաղ էր. Լուսնակեանը իրան մի փոքր վատ էր զգում և կուրծքը՝ կարծես դժուարութեամբ էր ելևէջում։ Նա մտածեց գնալ ծովափ և մի փոքր մաքուր օդ շնչել այնտեղ։ Նա գլխիկոր քայլերը ուղղեց դէպի ծովափը և հանելով այնտեղ, նստեց ու սկսեց դիտել անսահման ծովը։ Արևը արդէն մայր էր մտել և արշալոյսը ալ-կարմիր բոցավառում էր, իր այդ հրաշալի տեսարանք ցոլացնելով ծովի խորութեան մէջ, որտեղ, կարծես ջուրը հրդեհւում էր։

Թռչունները երամ-երամ բարձրաձայն ծվծվալով ու կռկռալով լողում էին ծովի վրայ՝ օդի մէջ։ Երբեմն էլ երեկոյեան զով քամին փչում էր և ծովի խաղաղ կապուտակ մակերևոյթի վրայ ցոլացնում փոքրիկ—չերատուր ալիքներ, որոնք մէկը միւսին հրելով առաջ էին խաղում դէպի ծովի խորքերը և անյայտանում...

Նստած էր Լուսնակեանը ափի մօտ ու լուռ նայում էր բնութեան այդ գեղեցիկ տեսարանին։ Նրան շրջապատել էին զանազան մտքեր ու անուրջներ, որոնք հետզհետէ ալեկոծում էին նրա զգացմունքները։ Ակամայից նրա երևակայութեան մէջ զարթեցան տարիներ առաջ պատահած սիրային անցքերը, իր անկեղծ սէրը դէպի Հռիփսիմէ Պուռօնեանը.

նրա քաղցր համբոյրները, ապա հիասթափ-ումը, ուսում շարունակելը և վերջապէս երե-ւակայում էր իր ապագան, ծրագիրներ էր մշա-կում գործելու համար։

Այդ յիշողութիւնները ճնշում էին նրա հո-գին և յաճախ կնճիռներ էին երևան հանում նրա բաց ճակատի վրայ։ Երբեմն մի մի հոգ-ւոց էր դուրս թռչում նրա մատաղ կրծքի խոր-քերից։

Խաւարը սաստկանում էր և շրջակայքը դառնում էր անտեսանելի։ Ծովը աստիճանա-բար ընդունում էր սև գոյն, որ կարծես, մի ընդարձակ սաւան ձգուած լինէր լեռների ստո-րոտում։ Արտէմը չէր նկատում գիշերուայ մօ-տենալը. նա դեռ խորասուզուած էր մտքերի ու ցնորքների մէջ։ Քամին միայն սթափեցրեց նրան, որ հետզհետէ ուժեղանում էր և ծովի մէջ մեծ ալիքներ կազմում, որոնք սկսում էին որոտաձայն մռնչալ ու զարկուել ափերին, կար-ծես ուզում էին դուրս գալ ափերից ու կլա-նել Լուսնակեանին։ Մի սարսուռ անցաւ նրա ամբողջ մարմնով և զգաց, որ ցուրտ է. նա-յեց շուրջը, տեսաւ, որ արդէն գիշեր է, նա բարձրացաւ նստած տեղից և ուղղուեց դէպի տուն։

Յանկարծ մի խուլ շշուկ և մարդկային ձայն հասաւ նրա ականջներին. նա ցնցուեց,



նայեց իր շուրջը, բայց ոչինչ չնկատեց խա-ւարի մէջ. «Ալիքները կատաղել են», մտածեց ու շարունակեց քայլել։ Բայց դարձեալ նրա ականջներին հասաւ մի ձայն, որ նման էր կանացի հեկեկանքի. Լուսնակեանը կանգնեց, շունչը ներս քաշեց և դիտելով շուրջը՝ սկսեց որոշել քամու ոռնոցի հետ եկող այդ խորհրդ-աւոր ձայնը։

Նա կարողացաւ որոշ լսել կանացի քն-քոյշ հեծկլտոց ու հոգւոցներ։ Անպատճառ մի եղերական գաղտնիք կար այդ տարաժամին ծովի ափում։ Նա զգուշութեամբ առաջ շար-ժուեց այն կողմ, որտեղից լսւում էր այդ ձայ-նը։ Եւ ի՜նչ, նա խաւարի մէջ նկատեց մի ստուեր, որ մերթ մօտենում էր ծովին, մերթ մի քանի քայլ հեռանում ու չոքում գետնի վրայ։ Լուսնակեանը բաւականին մօտեցաւ նը-րան, որոշակի տեսաւ, որ այդ կին էր։ Նա մի քարի յետեւում կուչ գալով, սկսեց ականջ դնել նրա կցկտուր արտասանութիւններին ու դիտել շարժումները։

Մթնում որոշ կերպով չէր նկատւում կնոջ կերպարանքը. այլ լսելի էր միայն, որ նա լա-լիս էր աղէկտուր, հեկեկում էր, զարկում կրծքին ու ինչ որ մրմնջում։ Ահա նա վեր կա-ցաւ, մօտեցաւ ջրին և երեսը խաչակնքելով ուզեց նետուել ծովը, երբ իսկոյն Լուսնակեա-

նը մօտ վաղեց դէպի նա, բռնեց նրա բազուկներից ու յետ քաշեց, ասելով.

—Սպասեցէք, քոյրիկ, յանցանք մի գործէք։

—Թողէք, թողէք, ով էք դուք, որ խանգարեցիք՝ գտնել իմ հանգիստը այս ալիքների մէջ. թողէք ինձ, խնդրում եմ, հեռացէք այս տեղից,—խօսեց թոյլ ձայնով կինը և աշխատեց դուրս պրծնել երիտասարդի ձեռքերից։

—Ոչ, ոչ, դուք իրաւունք չունիք ձեր կեանքը սպանելու։

—Ունիմ իրաւունք իմ սեպհական անձիս վրայ, թողէք, աղաչում եմ ձեզ։

—Եկէք, քոյրիկ, եկէք, գնանք այստեղից, մի փոքր հանգստացէք, դուք յոգնած էք սաստիկ, ասաց Լուսնակեանը և առաջնորդեց դէպի տուն։

—Թողէք, իզուր մի երկարացնէք տառապեալ կեանքս, մի կրկնապատկէք հոգուս տանջանքները, մեղք եմ, խղճացէք ինձ, թող վաղորօք հանգստանամ ծովի յատակում։

—Հանգստացէք, հանգստացէք, կրկնում էր երիտասարդը և նրան առաջ քաշում։

Միենոյն է, ես կորած եմ, իմ վերջս այստեղ է. այսօր չը լինի, վաղը կընկնեմ ջուրը, ծովը փախչելու չէ այստեղից և պատրաստ է ինձ նմաններին ընդունել իր գիրկը։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

# ԹՇՈՒԱՌՆԵՐԸ

1001
5268

Дозволено цензурою, 16 Июня 1904 года. г. Тифлисъ.

(պատկեր)

ԹԻՖԼԻԶ 1904
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Ընկ. Մադաթ. փող., 15.
(69)

Дозволено цензурою, 16 Ноября 1904 года. г. Тифлисъ.

# ԹՇՈՒԱՌՆԵՐԸ

(պատկեր)

Աշնանամուտ գիշերներից մէկն է. երկինքը ծածկված է թանձր թխպերով և վերից մաղում է մանր անձրև։ Աստղերը բոլորովին թագնված ամպերի ետևում՝ իրանց աղօտ լոյսը կորցնում են նրանց թանձրութեան մէջ։ Գիշերային խաւարը ընդգրկել է բնութիւնը. մարդիկ պատսպարվել են իրանց բնակարաններում և գտնվում են քաղցր քնի գրկում։ Դրսում չեն երևում ոչ մարդ և ոչ անասուն։ Թեթև, բայց մի տեսակ փշաքաղող, ցուրտը և լալկան բնութիւնը շնչաւորներին քշել, բներն են կոխել։ Եւ այդ խաւարի մէջ լսելի է միայն անձրևի խուլ շշուկը և նրանից գոյացած սելաւի քչքչոցը, որ միախառնվելով խաւարի անհաճոյ տպաւորութեան հետ՝ աւելի խորհրդաւոր և սարսեցուցիչ էր դարձնում շրջապատը։

Քաղաքի հարուստ դասակարգի հոյա-
կապ, պալատանման շինութիւնների ետեւում,
սարի վրա կանգնած էր մի գձուձ տնակ.
Նրանից էլ բարձր շինութիւն չը կար. Նա ա-
մենավերջինն էր։ Մի փայտեայ խուց էր նա,
որի նմանը հովիւները ամառ ժամանակ շի-
նում են սարի գլխին կամ դաշտի միջին, իբր
ժամանակաւոր կացարան։ Լերան կրծքի-լերկ
հողի վրա հնաւուրց շինած աղիւսէ պա-
տերի վրա ծածկած էր տախտակէ առաստաղ,
վրան հին ցնցոտիներ ու խոտ փռած՝ անձ-
րեւից և արեւից պաշտպանելու համար։ Վե-
րին պատը ժամանակի ընթացքում սարից
հոսող հեղեղի շնորհիւ մասամբ քանդվել էր,
մնացածն էլ կիսախարխուլ դրութեան մէջ էր.
Քանդված մասը փոխարինված էր մի երկու
փթած փայտերով, կոտրած քարերով և
ժանգոտ ժեստերով։

Խրճիթի մէջ ոչ մի պիտանի կահկա-
րասիք չը կար։ Մի երկայն հին, հազար կար-
կատաններով լի, գորգ փռված էր թաց գետ-
նին, մի կողմում՝ նոյնպէս յատակի վրա դըր-
ված էին մի երկու կոտրած ափսէներ, դդալ-
ներ, ճրագ, որ դեռ վառվում էր և իր թոյլ



լուսով տեսանելի կացուցանում դառն աղ-
քատութեան այդ կենսամաշ բոյնը։ Գիւղա-
կան համեստ խրճիթն իր պարզ ու աղքա-
տիկ կահաւորութեամբ այս մարդաբոյնի հետ
համեմատած՝ արքունիք էր։

Յատակի վրա պատառոտած, հին ան-
կողիններում իրար մօտ կարգով պառկած էին
այդ տան բնակիչները։ Նրանք էին՝ մի հա-
սակաւոր-միջին տարիների տղամարդ, երեք
փոքրիկ մանուկներ և մի նիհար, դալկացած
կին։

Բոլորն էլ սեղմվել, կուչ էին եկել ցըր-
տից ու խոնաւութիւնից, որոնք անարգել
ներս էին թափանցում պատերի ու առաս-
տաղի խոշոր բացւածքներից։ Հեղեղը, փորե-
լով պատի թոյլ հողը, անկոչ հիւրի նման
ներս էր հոսում խրճիթը, թաց անում տղա-
մարդի պառկած անկողինը և ապա՝ մի քա-
նի պտոյտներ գործելով միւս պատի տակից
դուրս ծլկվում....

Խեղճ մանուկներն ինքնաբերաբար մի-
մեանց մօտեցել, մէջքմէջքի էին տվել և
այնպէս կուչ եկել, որ վերմակի տակից նման-
վում էին գնդակների. Նրանք ոչինչ չէին ըղ-

գում. խոր քունը, մի քանի ժամ անզգայացրել էր նրանց թոյլ մարմինները և մոռացնել տվել քաղցն ու ծարաւը։ Նրանց հիւանդ հայրը հազում էր և տնքում. մայրը անքուն էր, թէև աշխատում էր քնել և մոռանալ արտաքին աշխարհը։

Անձրևը ոչ միայն չը դադարեց, այլ ընդհակառակն, սաստկացաւ. տեղատարափի չարագուշակ շշուկն աւելի մեծացաւ... Հեղեղաջուրը սկսեց առատօրէն ներս հոսել, առաստաղից էլ սկսեց կաթել. այս կաթիլներից մէկն ուղիղ ընկաւ պառկած կնոջ երեսին, որը ցնցվելով ջրի յանկարծական սառնութիւնից աչքերը բացեց և վեր թռաւ. ամեն ինչ պարզ էր նրա համար. «Ախ՛, Տէր-Աստուած, ինչո՞ւ ես պատժում մեզ....»։

Այդ միջոցին հիւանդը կրկին սկսեց հազալ սաստիկ կերպով, որից յետոյ լսվեցին մի քանի տնքոցներ. կինը նայեց նրա վրա. մորմոքվող սրտով վեր ցատկեց. մօտեցաւ նրան՝ վերմակը ուղղելու. բայց ի՜նչ տեսաւ. —հիւանդն ամբողջովին թաթախված էր ցեխախառն ջրի մէջ։ Ուժասպառ կինը կանացի թոյլ ույժերով շտապով,սակայն զգուշու-



թեամբ, մի կողմ քաշքշեց հիւանդին, որ արդէն հետզհետէ հալվում էր և հանդչելուն մօտենում.... Նա նայեց պատի բացւածքից տեսնելու, թէ արդեօք լուսացել է, որպէսզի բաց անէ դուռը, դրսից կապէ ջրի ճամբան, բայց դեռ խաւարը չէր փարատվել. մութն ու լոյսը կռվում էին իրար հետ։

Թէև նա վախում էր այդպիսի մի ժամանակ մենակ դուրս ելնել, այն էլ քաղաքի ծայրին սարի վրա, սակայն ամուր սէրը մոռացնել տվեց նրան վախ ու երկիւղ, և նա դուռը բացեց, բոբիկ ոտներով դուրս վազեց մթութեան մէջ, սկսեց ջրի ճամբան բացել՝ պատի անցքին կուտակելով ցեխ ու քար։ Նա ամողջովին թրջված, կեղտոտված ներս մտաւ ու դուռը կրկին փակեց։ Թէև հեղեղն այլ ևս չէր հոսում ներս, բայց առաստաղից շարունակում էր կաթել, հարկաւոր էր դրա առաջն էլ առնել, բայց ինչպէս. մտածեց, մտածեց թշուառ կինը, բայց կաթիլքի առաջն առնելու հնար չը գըտաւ....

Նա դողդոջուն ծնկներով կանգնեց, աչ-

քերը նետեց վեր՝ առաստաղին և կիսամերկ ձեռները փարելով սկսեց աղօթել։

—Տէր իմ, թշուառների ու աղքատների Հայր, միթէ՞ չես տեսնում, չե՞ս խղճում մեզ, այս անմեղ մանուկներին, այս ցաւատանջ, հիւծուած հօրը. ինչո՞վ են մեղաւոր, Տէր, որ տանջւում են անխնայ կերպով. մի՛ դարձնիր Քո երեսը մեզանից, գոնէ առողջութիւն պարգևիր այս դժբախտ, չարքաշ հօրը, որ կարողանայ սեփհական ջանքով, ազնիւ ճանապարհով մի կտոր հաց վաստակել իր մատաղ զաւակների համար։

Արտասուքը խեղդեց նրա կոկորդը, և նա լռեց մի րոպէ, մնալով չոքած. աչքերից հոսող կաթիլները միախառնվում էին առաստաղից թափվող կաթիլների հետ և թրջում յատակը։ Մի քանի րոպէ ջերմեռանդօրէն աղօթելուց և աղիողորմ արտասվելուց յետոյ, նա հագուստի փէշերով մաքրեց աչքերը, ոտքի կանգնեց և ձեռները կրծքին՝ կանգնած մնաց՝ հայեացքը յառած սենեակի մի անկիւնը։ Կարծես մի խորհրդաւոր բան կար թագնված այդ անկիւնում, որ գրաւել էր դժբախտ կնոջ խառն մտքերը։ Ինչե՞ր չէր



մտածում նա—շատ բան. հիւանդ ամուսնու ծանր դրութիւնը, անմեղ տանջվող մանուկների դառն վիճակը, քաղցը, ծարաւը և այլն և այլն.... մտքեր վայրկենապէս համախմբվեցին նրա ուղեղում և մտաւոր աչքերի առաջ. նա փնտռում էր մի ելք, մի յանկարծական փոփոխութիւն այդ դրութիւնից ազատվելու և կարծես այդ ելքը, այդ յոյսը նա սպասում էր խրճիթի անկիւնից....

—Ո՛չ, հարկաւոր չէ մեղանչել, պէտքէ հնազանդվել ճակատագրին. Աստուած ողորմած է, գուցէ նա մի օր կը խղճայ մեզ, կայցելէ,—մրմնջաց ու մտաւ իր տեղը։

Փոքր ինչ յետոյ լոյսը բացվեց։ Դրսում լսելի եղաւ քաղաքի սովորական աղմուկը. նա կրկին վեր ելաւ՝ դուռը բացեց, դուրս եկաւ և մի ընդհանուր հայեացք ձգեց առջևում տարածված քաղաքի վրա. ամենից առաջ աչքի ընկան Սօլօլակի մօտակայ մեծաշէն տները և ապա նրա հայեացքը տարածվեց աւելի հեռու....

Անձրևը կտրվել էր. երկինքը սկսում էր պարզել. ամպերը բարձրացած քամու շնորհիւ, դէս ու դէն էին ցրվում, տեղի տա-

լով երկնքի յատակ հորիզոնին։ Արևը նոր էր սկսել ցոյց տալ իր դէմքը, բայց շուտ-շուտ ծածկվում էր անցնող ամպերից ու կրկին ազատվում։

Կինը վեր նայեց երկինք, խաչակնքեց երեսը և ասաց լսելի ձայնով՝

—Փառք Քեզ, Աստուած, դարձեալ լուսացաւ, դարձեալ տուեցիր պայծառ օր մեղաւոր մարդկանցս. փառք Քո անհուն գթառատութեան....

Երեխաներն արդէն արթնացել էին և «մայրիկ»—«հայրիկ» էին կանչում։ Մայ ը ներս վազեց, բայց հայրիկը դեռ քնած էր խոր քնով և չէր արթնանում։

—Հայրիկը քնած է, աղմուկ մի հանէք, թողէք քնի, մեղք է, թոյլ ձայնով ասաց նա երեխաներին։

Ապա մօտենալով պառկածին, վերմակը կրկին ուղղեց, յետ քաշեց նրա երեսից, որ հիւանդն ազատ շնչէ։

—Խեղճ մարդ, հաղիւ հանգիստ քնեց, հաղիւ կտրվեց դաժան հազը, սո՛ւս, ո՛դիք, կամաց, զգուշացրեց նա և թողնելով հիւանդին՝ հագցրեց երեխաներին—երեսները լու-



աց, անկողինները կուլուլելով կուտակեց մի անկիւնում։

—Ցուրտ է, մայրիկ, տաք թէյ եմ ուզում, ասաց երեխաներից մէկը։

—Հաց եմ ուզում, յարեց երկրորդը։

Մայրը մի խոր հոգոց հանեց և պատասխանեց.

—Թէյ կայ, զաւակներս, բայց շաքար չը կայ, ինչով պիտի խմէք թէյը։

Միայն մեծ երեխան՝ մօտ 11 տարեկան մի աղջիկ, հասկացաւ «չը կայ» բառը. իսկ երկուսը շարունակեցին պահանջել—լալով՝

—Ը ը ը՜, ը ը ը՜, չայ, հաց ենք ուզում։

—Ի՞նչ անեմ, Տէր-Աստուած, որտեղից գտնեմ, ինքն իրան խօսեց թշուառ կինը,- ոչ մի կոպէկ չունենք, հացի կտոր չը կայ, ոչինչ չըկայ. երէկ սպառվեց վերջին 25 կոպ. և եղած հացը. խանութպանը այլ ևս չի տալ ապառիկ, հացթուխը հաց չի տալ, որովհետև ահագին պարտքեր ունենք վճարելու. ա՜խ, մի ճանապարհ ցոյց տուր, Տէր...,

Նա անգիտակցաբար թողեց երեխաներին և դուրս ելաւ՝ կարծես այնտեղ մի ճար

գտնելու. սակայն մի քանի րոպէ շուարած կանգնելուց յետոյ կրկին ներս մտաւ։

—Քիչ համբերեցէք, որդիք, մի քիչ էլ քաղցած մնացէք, թող հայրիկը գործի, նա կը բերի հաց։

—Քաղցած ենք, շարունակեցին մրթմրթ-ալ անգիտակից մանրիկները. միայն նրանցից անդրանիկը՝ Աստղիկը, ըմբռնելով իրանց ներկայ թշուառութիւնը, լուռ, ձեռները կրծքին ծալած մտածում էր. թւում էր՝ թէ նա էլ էր աշխատում մի հնար գտնել փրկվելու աղքատութեան ճիրաններից։

Երեխաների համբերութիւնը սպառվում էր։ Կինը մօտեցաւ՝ և ամենայն զգուշութեամբ ձայնեց ամուսնուն. փոքրիկ երեխան էլ ընկնելով հօր վրա թոթովեց՝—Հայրիկ, հաց եմ ուզում, հայրիկ...

Հիւանդն արթնացաւ. մի քանի վայրկեան ապուշի հայեացքով նայեց կնօջը, երեխաներին, իր շուրջը և ճիգ թափեց նըստելու։ Կինը իսկոյն օգնեց նրան, շորերը հագցրեց, մի հին գզգզված շալ էլ գլխին ծածկեց։ Նրա հազը դարձեալ սկսվեց. նա հազում էր և խօլխում։



—Այսօր ինձ աւելի վատ եմ զգում, Հռիփսիմէ, խօսեց նա հազիւ լսելի ձայնով։

Հռիփսիմէն էլ զգում էր այդ. և երկու խոշոր արցունքներ աչքերից գլորվեցին. նա շուռ եկաւ, մաքրեց աչքերը և դարձաւ ամուսնուն։

—Սիրելի Միքայէլ, մի վախենար, պինդ պահիր սիրտդ, Աստուած ողորմած է։

Այդ միջոցին պայծառ արեւը դուրս սլացաւ ամպերի տակից և կենսաբեր ճառագայթները առատօրէն սփռեց թաց երկրի վրա. բնութիւնը կարծես յանկարծ աշխոյժ կերպարանք ստացաւ և ժպտաց. քաղաքի կենդանութիւնն աւելացաւ։

Միքայէլը խնդրեց կնօջը, որ իրան խրճիթից դուրս տանէ, արևի տակ նստեցնէ, նրա ճառագայթներով տաքանալու համար։ Հռիփսիմէն արագութեամբ կատարեց ամուսնու ցանկութիւնը. խրճիթում եղած երկու հին աթոռներից մէկը դուրս տարաւ, դրեց խրճիթի պատի տակ, ապա հիւանդի թևից բռնելով, առաջնորդեց և նստեցրեց նրա վրա։ Երեխաներն էլ դուրս վազեցին։

—Հայրիկ, հաց։

Հայրը հարցրեց կնոջը, թէ ունի՞ն հաց կամ փող, կինը պատասխանեց, որ ոչինչ չունեն։

Միքայէլը մի դառն ախ քաշեց, աչքերը մզեց թափվող արցունքներից, ու պտրտելով գրպանները, մի անկիւնում գտաւ երկու հատ հինգ կոպէկանոցներ։

—Ահա, մեր ունեցած վերջին փողը, Հռիփսիմէ, տո՛ւր Աստղիկին, թող հաց գնէ։

Աստղիկը վերցրեց այդ փողը և շտապեց հաց բերելու. իսկ երկու երեխաներն սկսեցին միմեանց հետ խաղալ, սպասելով հացին։

Հռիփսիմէն էլ ամուսնու մօտ մի քարի վրա նստեց և ցաւակից հայեացքով դիտեց նրան։

Հիւանդը արևի ճառագայթներից կարծես ոյժ ստացաւ. Նրան թւում էր, թէ մի փոփոխութիւն է կատարվում իր մաշված կրծքի և ուժասպառ ջղերի մէջ։ Սակայն թոքախտը անգութ կերպով կրծել էր նրա մարմինը։ Թշուառ Միքայէլը սկզբում շատ առողջ էր եղած. Նրա պինդ կազմուածքը, յաղ-



թանդամ հասակը, լայն կուրծքը շատերի միջից նրան որոշում էին. բայց կեանքի ծանր պայմանները, մանր երեխաները ճնշեցին նրան. ունեցած միակ խրճիթը հիմնովին անպէտքացել էր բնակութեան համար, արիւն քրտինքով վաստակած մի քանի ռուբլի փող աւազակները մտան գողացան և այնուհետև աղքատութիւնը այցելեց նրանց ու դուրս չելաւ։ Երբեմն օրերով քաղցած են մնացել կնոջ հետ, նամուսը թոյլ չէ տվել խնդրել մարդկանցից, իսկ փոխ տալ ոչ ոք չէ համաձայնել, որովհետև գիտէին, որ նա ոչինչ չունի, և այդպիսով այդ չարաբաստիկ պայմանները առողջ Միքայէլին յեղափոխեցին. նրա ուժեղ կրծքում նստեցին մաշող թոքախտ։

Այժմ նա չէ նմանում 8—10 տարի առաջուայ Միքայէլին։ Նա այդ րոպէին արևի տակ, աթոռի վրա նստած նմանում էր գերեզմանից հանած մեռելի.... Նրա [illegible]ն ու կաշին իրար էին կպել, այտոսկրները տնկվել էին. Նիհար քիթը, կարծես, աւելի երկարացել էր. աչքերը խորն էին ընկել իրանց վանդակների մէջ, կոպերի տակ կապուտկել էին ինչպէս ուռած վէրքեր։ Ան-

խընամ թողած գլխի մազերը, մօրուքը և բեղերը այնքան էին երկարել, որ իրար էին խառնվել։ Վաղուց նա մոռացել էր հոգալ խուզվելու և սանրվելու մասին. ձեռների միսը հալվել էր և միայն երկար մատոսկըռներն էին ցցվել.... և այս ամենի վրա հագած ցնցոտիները լրացնում էին նրա թշուառ պատկերը. Նա նմանում էր մի կախարդի, որպիսին յաճախ պատկերացնում են հէքեաթական գրքերում, բայց նա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ աղքատութեան և դառնալից կարիքի մի մարմնացած արձան։

Նրա մօտ նստած էր իր վշտակից կինը։ Հռիփսիմէն էլ իր ժամանակ բացված վարդ էր եղած. նրա գեղեցկութիւնը շատ փեսացուների սիրտ է կաշկանդել, նոյն իսկ հարուստ, դիրքով մարդիկ խնդրելիս են եղել նրա ձեռքը, բայց նրա սիրտը գտել էր իր սրտակիցը և նուիրված էր մէկին. դա Միքայէլն էր։ Նրանք սիրահարված, ամուսնանում են և ամուսնական առաջին քաղցր շըրջանը հանգիստ անց կացնում։ Օր աշխատում—օր ուտում էին։ Սակայն ամուսնութեան քաղցրութեան պտուղները—զաւակնե-



րը, հետզհետէ զգալի դարձրին կեանքի ծանրութիւնը. ի լրումն դրա անյաջողութիւնն էլ միւս կողմից թաթը մեկնեց այդ սիրահարների ընտանեկան առագաստի վրա. և աստիճանաբար փոփոխվելով — այլակերպվելով, ընկճվելով, նրանք հասել էին ներկայ վիճակին։

—Ո՜րքան քաղցր է կեանքը, Հռիփսիմէ, ասաց հիւանդը կիսաժպտուն հայեացքով, բայց իմ կեանքի ճրագը հանգչում է....

—Ի՞նչ ես խօսում, սիրելիս՝ ինչու ես տանջում ինձ, ինչ կարիք այդպիսի յուսակտուր խօսքեր ասելու, հաւատա և յուսա, որ կառողջանաս։

—Է՜հ, հոգիս, իզուր ես աշխատում դատարկ յոյսերով մխիթարել ինձ. մի՞թէ իմ հոգուս տրամադրութիւնը ինձ յայտնի չէ. ես համոզված եմ, որ մահս մօտ է, թերևս առաջիս կանգնած է, սակայն խղճում եմ քեզ, սիրելիս, քեզ ու այս անմեղ զաւակներիս. ո՞վ կը պահէ սրանց....

Եւ նա չը կարողացաւ շարունակել խօսքը. հազը խեղդեց կոկորդը, յուզմունքը ճըն-

չեց նրա սիրտը ու աչքերից դուրս ցայտեց աղի արցունքը։

Հռիփսիմէն խորապէս զգացվեց. Նրա կրծքից էլ դուրս հոսեց կուտակված վշտերի հոսանքը. Նա էլ սկսեց հեկեկալ, տրորվել և բաժանել ամուսնու վիշտը։

Փոքրիկները՝ տեսնելով իրանց հօրն ու մօրը լալիս, թողեցին խաղը և ցեխաթաւալ վազեցին դէպի ծնողները, սկսեցին քաշքշել մերթ մօրը, մերթ հօրը՝ ասելով.

—Մի լար, մայրիկ, թէ չէ մենք էլ կուլանք։

Այդ միջոցին Աստղիկը վարից բարձրանում էր ձեռքին բռնած մի հաց ու կէս։ Երեխաները, տեսնելով հացը, թողեցին ծնողներին ու ընկան հացի վրա, սկսեցին կտըրտել և ագահաբար ուտել։

Հռիփսիմէն զսպելով իրան, գոգնոցով մաքրեց արտասուակոլոլ աչքերը, նիհար երեսը և դարձեալ մխիթարեց ամուսնուն։

—Ես իմ սիրովս դժբախտացրի քեզ, իմ անգին Հռիփսիմէ, չարունակեց հիւանդը. բայց ես եսամոլ չեմ. վերջին անգամ ասում եմ, որ ես իրաւունք եմ տալիս քեզ. ինձա-



նից յետոյ կրկին ամուսնանալ մի արժանաւոր մարդու հետ, թերևս լաւ օրեր տեսնես...

—Մի տանջիր ինձ, հոգիս, մի խօսիր այդ մասին. ո՞ր սիրող սիրտը կարող է դաւաճանել ամուսնու սիրահար սրտին։ Քեզանից յետոյ թող ես էլ չապրեմ ու նոյն իսկ սրանք, այս մանր էակներն էլ աւելորդ կը լինեն։ Աստուած մի արասցէ քեզ մի դըժբախտութիւն պատահի, Հռիփսիմէն էլ քեզ հետ միասին կիջնի գերեզման։ Չէ՞ որ այդպէս ենք ուխտել։

Մինչ նրանք խօսում էին իրանց վըշտերի հետ, երեխաները կշտանալով, աւելորդ հացի կտորը բերին տուին հայրիկին ու մայրիկին։

—Կեր, Միքայէլ, կեր, որ սնունդ ստանաս, քանի օր է, ոչինչ չես կերել, ասաց կինը։

—Ախորժակ չունիմ ուտելու, հոգիս, ես միայն ուզում եմ կշտանալ այս պայծառ արևից, բնութիւնից։ Ա՜խ, օրե՜ր, օրե՜ր, ո՞ւր թռաք, գնացիք....

Հռիփսիմէն էլ ախորժակ չունէր, նա

լռեց և ձեռքը դնչին կրթնած սկսեց դի-տել դիմացում փռված հարուստ շինութիւն-ները և մտածել:

Նա այդ րոպէին պատկերացնում էր դի-մացի մեծաշէն յարկերում, չքեղ սենեակնե-րում նստած ունևոր, հարուստ մարդկանց, սեղանի շուրջը բոլորած թէյ են խմում, նա-խաճաշում, ծառաները հոգում են ամեն ինչ, պատրաստում և մատուցանում: Պարոն-ները ոչինչ կարիք չունեն—«չունևորութեան» հոգսը շատ հեռու է նրանցից և նոյն իսկ անծանօթ. փողն առատօրէն զրնգում է նրանց գրպաններում. Նրանց կանայք, որդիքը — «չը կայ» բառ չեն լսում. ամեն ինչ առատ է և աշխարհս նրանց ձեռքին մի քմահա-ճոյք է: Իսկ իրանք հէնց այդ րոպէին տանջ-վում են, տառապում են, լալիս են և մի բաժակ տաք ջուր, թէյ չունեն իրանց թոյլ մարմինները տաքացնելու, կազդուրելու:

—Երևի այս է աշխարհիս օրէնքը, նրանք բախտաւորներ են, իսկ մենք դժբախտներ, թշուառ և անպէտք արարածներ, եզրափա-կեց իր մտքում Հռիփսիմէն:

—Սիրելիս, Միքայէլ, այսուհետև ես



կաշխատեմ, հերթն իմս է, կը գնամ մօտա-կայ մեծատունների մօտ, լուացք կանեմ, սամօվար կը մաքրեմ և մեր հացի գինը կը հանեմ:

Միքայէլը նայեց կնոջ երեսին, իր ցա-ւագար հայեացքը նետեց նրա հայեացքին, կարծես ուզենալով մի նկատողութիւն անել և միայն մի քանի վայրկեանից յետոյ՝ խօսեց.

—Հապա մանրիկներին ո՞վ խնամէ:

Հռիփսիմէն չը գտնելով պատասխան— լռեց:

Արևելահարաւային կողմից մի քանի կոյտ սև ամպեր դանդաղօրէն սահում էին երկ-նակամարի վրայով, որոնք մօտենալով արևին, սկսեցին ծածկել նրան երկրի երեսից: Հի-ւանդը, զրկվելով արևի ջերմութիւնից, սկսեց մրսել: Նա խնդրեց կնոջը օգնել նրան ներս մտնել: Կինը նոյն զգուշութեամբ ճիգ թա-փելով, ամուսնուն քարշ տվեց խոնաւ խրճի-թը և պառկեցրեց չուլերի վրա:

Ցանկարծ հիւանդը սկսեց սաստիկ հա-զալ, և արիւն թքել. նա այլայլվեց. մոմի նման դեղնած երեսը ծածկվեց սառն քըր-

տինքով և մահուան հրեշտակը մտաւ իր իրաւունքների մէջ։

—Միրելի Հռիփսիմէ ե․ ե․ ս․ս մեռնում եմ․ ․ ․ ․ կմկմաց նա և լռեց․ ․ ․ ․ ․

Հռիփսիմէն, որ աւելը վերցրած մաքրում էր խրճիթի ցեխը, կայծակահար եղածի նման, դէն շպրտեց աւելը և վրա ընկաւ ամուսնու կրծքին։

—Միքայէլ, հոգիս, սթափուիր, ա՛խ Տէր Աստուած, բժիշկ։

Բայց արդէն ուշ էր․ Միքայէլը անշընչացել էր․ աչքերը կիսաբաց՝ յառած էին առաստաղին, բերանը բաց էր մնացել, մի ձեռքը կրծքին դրած, միւսը մի կողմ մեկնած։

Խեղճ կինը խելագարութեան հասած, սկսեց ճչալ, քաշքշել մեռածին, կարծես, ուզում էր խլել նրան մահուան զօրաւոր ճանկերից և նորից կեանք պարգևել. Ծեծում էր կուրծքը, մազերը փետտում և ողբում. արտասունքը վարարած աղբիւրի նման անընդհատ հոսում էր նրա բոցավառ աչքերից և թրջում թէ իր և թէ մեռած ամուս-



նու կուրծքը։ Երեխաները լսելով մօր յանկարծական և տարօրինակ աղաղակները, ներս վազեցին և տեսնելով հօրը մեռած՝ իրանք էլ ընկան նրա վրա և ձայնակցեցին մօր ողբին։ Փոքր ինչ յետոյ մօտակայ դրկիցներից միքանիսները եկան-տեսան այդ ցաւալի տեսարանը ու գիտենալով, որ մեռելին թաղելու ոչ մի կոպէկ չունի խեղճ այրին, սկսեցին խորհուրդ անել այդ մասին և վճռեցին իրար մէջ ու բարեկամների շրջանում նպաստ ժողովել։

Մի քանի ժամից յետոյ օտարները ցըրվեցին և մնացին դարձեալ նոյն թշուառները իրանց խոր վշտում պարուրված։ Երեխաները, որոնք դեռ խոր չէին ըմբռնել բախտի հարուածի ծանրութիւնը, — զբաղվեցին իրանց մէջ խաղալով, իսկ մայրը բոլորովին ապուշացած, ուռած աչքերով նստել էր սիրեցեալ ամուսնու դիակի մօտ, երբեմն ողբում էր և երբեմն մտածում դրութեան մասին։ Աստղիկն էլ, փոքր ի շատէ խելահաս, նստել էր մօր կողքին և թոյլ չէր տալիս նրան շատ լաց լինել։ Այրի կնոջ մտքում ծագում էին հետևեալ մտքերը՝

—Ինչպէս պէտք է ապրեն, որբուկները, ո՞վ պէտքէ աշխատէ և տուն բերէ նրանց համար օրական գոնէ ցամաք հացը։ Մինչ այդ դրութեան հասնելը, Միքայէլը աշխատում էր մի հիւսնի մօտ և շաբաթավարձով հայթայթում էր ապրելու համար անհրաժեշտ չափով փոքր ինչ կերակուր։ Սակայն ամբողջօրեայ անընդհատ և ծանր աշխատանքը, անբաւարար և վատ պայմանները, մտածմունքը քայքայեցին Միքայէլի թուլակազմ մարմինը. և թոքախտը սկսեց կտրել նրա կենաց թելը։ Ուրեմն ինչ անել։ Խեղճ կինը չունէր ոչ մի ազգական, եղբայր, քոյր, որոնցից օգնութիւն սպասէր։ Ամուսնու միակ եղբայրը, որ հարուստ մարդ էր, մոռացրած իր խիղճն ու մարդկային զգացմունքները, ամբողջ հարստութիւնը վատնում էր անառակ կանանց վրա։ Նրա համար չը կար եղբայր՝ վաղուց ձեռք էր վերցրել հարազատութիւնից. նոյն իսկ մի անգամ հիւանդը իր մեծ երեխային ուղարկել էր մի քանի կոպէկ հացի գին խնդրելու իր հարուստ եղբօրից, բայց վերջինս առանց կոպէկի յետ էր ճամբել քաղցած եղբօրորդուն։



Գնալ, աշխատել զանազան տներում, միակ այդ ճանապարհն է մնացել. հապա ո՞վ խնամէ երեխաներին. անտէր թողնել նրանց գէթ մի րոպէ անկարելի է. հետը տանել—նոյնպէս չի կարելի. մուրալ—դռնէ դուռ ընկնել, փողոցէ-փողոց թափառել և ձեռք մեկնել անողորմ մարդկանց։ «Ո՛հ, ոչ —Աստուած մի արասցէ»—մտածում էր նա. աւելի լաւ է տասնեակ օրեր քաղցած-ծարաւ մնանք և մեռնենք, քան ձեռք մեկնենք. մուրացկանութիւնը ամօթ է և մարդիկ չեն էլ գթալ.... եզրափակեց նա մտքում. կանացի համեստութիւնը և ինքնասիրութիւնը աւելի մեծ ոյժով բռնկվեցին նրա մաշված կրծքի խորքում։

Նա քիչ յետոյ ուղարկեց Աստղիկին տագեր մօտ՝ յայտնելու եղբօր մահը։ Աղջիկը փաթաթելով գլուխը մի սպիտակ շալով, լուռ ու տխուր դուրս ելաւ։

Ապա թշուառ Հռիփսիմէն նորից ընկաւ դիակի վրա, լացեց ու մղկտաց, նրա աղիողորմ հեկեկանքից խրճիթի խարխուլ պատերն ու տախտակներն էլ էին մռմռում.—

«Թշուառ մարդիկ», կարծես շշնջում էին նրանք իրար մէջ։

— Ոչ, այլ ևս չարժէ ապրել այս ունայն աշխարհում—վեր ցատկեց կինը. ես կը խելագարվեմ վշտից. չեմ կարող դիմանալ. լաւ է այժմևեթ մեռնեմ, քան թէ խելքս թռցնեմ ու խելագար, կիսամերկ, փողոցներ շրջեմ և դարշ մարդկանց կրքերի ու ծիծաղի առարկայ դառնամ. աղքատի ապրելը հարամ է, գերեզմանն է նրա հանգստութեան բոյնը։

Այս խօսքերը մրմնջալով նա շտապով վազեց դէպի պատի անկիւնը, այնտեղ տախտակի ետևում թագցրած մի սրուակ հանեց, ինչ որ հեղուկով լի և մի վայրկեան մընաց երկբայ դրութեան մէջ։

Երեխաները կարծելով թէ մայրը նրանց համար թագցրած միրգ է հանում, ուշադրութեամբ սկսեցին դիտել մօր շարժումները։

Մի քանի րոպէ թոյնի սրուակը ձեռքին, թշուառ կինը մտորմունքի մէջ արձանացած մնաց կանգնած. նա չէր վճռում անելիքը.



ոչ թէ կեանքի քաղցրութիւնն էր նրան յետ կասեցնում այդ մտքից, այլ որբուկների վիճակը։

Ի՞նչ կը լինի նրանց դրութիւնը, ո՞վ պէտք է մայրական խնամք տանէ նրանց վրա. այս մտքերը հեռու էին պահում սրուակը նրա շրթունքներից. . . .

Մայրական ուժեղ սէրը և աղքատութիւնից առաջացած յուսահատութիւնը կռւում էին իրար հետ։ — «Իսկ եթէ կենդանի մնամ—միթէ աւելի վատթար չի լինի նրանց դրութիւնը—շարունակեց մտածել նա. չէ՞ որ դարձեալ այս չորս տախտակապատի մէջ քաղցից պէտք է մեռնենք. մինչդեռ իմ մահից յետոյ թերևս մարդիկ խղճան որբերիս, որբանոց տանեն, պահեն ու մեծացնեն։ Ո՛չ, ո՛չ, ես անզօր եմ նրանց տառապանքը թեթևացնելու. ես մի թոյլ կին եմ. իմ մահը, թերևս նրանց նպաստաւոր լինի»։
—Նրա աչքը կրկին ընկաւ Միքայէլի սոսկալի հայեացքին, որը կարծես ասում էր. «դու էլ մեռիր, հերիք տանջվես»։

—Մայրիկ, մայրիկ ջան, յանկարծ լսվեց փոքրիկ երեխայի լացը։

Մայրը սթափվեց մանկան ձայնից, սրուակը դրեց մի կողմ և գրկելով փոքրերին—պինդ սեղմեց կրծքին, համբուրեց նրանց։

—Թշուառ զաւակներս, շշնջաց նա։

—Մայրիկ ջան, մրսում եմ. ինձ համար նոր գուլպաներ, նոր ոտնամաներ կառնես, խօսեց միջնակ երեխան, որի ոտները համարեա բոլորովին մերկ էին, և հագած ունէր միայն պատառոտած կօշիկներ, որոնց միջից դուրս էին ցցվել ոտների մատները։

—Ինձ էլ, մայրիկ ջան, ես էլ եմ ուզում թազա չորեր, թոթովեց փոքրը։

Հռիփսիմէն նորից յուզվեց. նա չունէր պատասխան, նրա աչքի առաջ կանգնած էին իր հարազատ մանրիկները, պատառոտած հին շորերով, մերկ, կիսաբաց ծնկներով ու կիսաբոբիկ ոտքերով—եթէ հիւանդանան նրանք—թշուառ կնոջ վիշտը կը կրկնապատկեն. սակայն ի՞նչ անէր, ինչո՞վ գնէր, փող չունէր, նոյն իսկ վաղուան համար հացի կոպէկներ չունէր. . .



Դարձեալ փոթորկվեց նրա ներքինը. յուզվեց սիրտը. մայրական զգացմունքը մի րոպէ ընկճվեց սոսկալի իրականութեան կործանիչ պատկերից։ Նրա շնչառութիւնը արագացաւ, աչքերը լցվեցին կատաղութեան կրակով և նա սկսեց զառանցել, զանազան շարժումներ գործել. նա գրկեց երեխաներին նորից համբուրեց, սեղմեց կրծքին այնքան պինդ, որ նոյն իսկ նրանք ցաւից լաց եղան. ապա մօտեցաւ անշունչ դիակին, ընկաւ նրա վրա, լացեց, համբուրեց սառն դալուկ ճակատն ու մրմնջաց.

—Քեզ մենակ չեմ թողնիլ, գալիս եմ, անգին Միքայէլս։

Ապա շտապելով վերցրեց սրուակը, առանց այս ու այն կողմը նայելու, երեսը շրջեց երեխաներից, կարծես՝ վախենալով, որ նրանք—մանկական սիրալիր դէմքով կը ցընցեն իր սիրտը և յետ կասեցնեն. . .

—Ներիր ինձ, ո՜վ մարդասէր Աստուած, մրմնջաց նա և սրուակը մօտեցրեց դողդոջուն շրթունքներին. . . .

Երեխաներից մէկը նկատելով այդ՝ ձեռքը մեկնեց, ասելով՝

—Մայրիկ ջան, մի քիչ էլ ինձ տո՛ւր։

—Ինձ էլ, ինձ էլ, թոթվեց միւսը։

Մանկական այդ անմեղ թոթովանքները նորից սթափեցրին մօրը և նրա ձեռները յետ կայան բերանից։

—Անմեղ գառնուկներ, դո՛ւք էլ այդպէս վաղ զզուեցիք ձեր մատաղ կեանքից, ասաց նա, նայելով նրանց վրա մայրական ամենաջերմ սիրոյ հայեացքով։

Այդ վայրկեանին ներս մտաւ դատարկաձեռն Աստղիկը։

—Ո՛չ, չեմ անիլ, խօսեց նա ինքն իրան և թունալից սրուակը պատուհանից դուրս նետեց դէպի վայր, աշխատելով, որքան կարելի է դէն շպրտել հեռու, շատ հեռու....

Եւ իսկոյն արագաբար ձեռքերը մեկնեց դէպի չփոթված մանուկները և սեղմեց նրանց իր ալեկոծ սրտին։

—Սիրելի զաւակներս, ձեր մայրը միայն կը հասկանայ ձեզ, շշնջացին նրա այրվող շրթունքները։

Մի քանի րոպէ գգվելուցյետոյ, նրա հայեացքն ընկաւ ամուսնու դիակին, որը կարծես իր խորհրդաւոր անշարժութեամբ և մօր-



քիչ տեսարանով մի բան ասաց կնոջը, և սա, յանկարծակի, մեքենայական շարժումով դէն հրեց զաւակներին ու տարօրինակ ճչոցով ընկաւ ամուսնու վրա.

—Դու մեռար, հա՛, հա՛, հա՛, սովից մեռար, հա՛, հա՛, անբնական ժպիտով բացականչեց նա. Միքայէլ, մի՛ մեռնիր, ես մենակ չեմ մնալ։

Նրա աչքերը ուռեցին և լցվեցին մի տեսակ վայրենի արտայայտութեամբ։

Նա արդէն խելագար էր....

Մանուկներն իսկ սարսափեցին մօր արտասովոր կերպարանքից և չփոթված սկսեցին լաց լինել։

—Հա՛, հա՛, հա՛, հաց էք ուզում, հայրիկին ասացէք, ես փող չունեմ, դարձեալ զառանցեց խելացնոր մայրը։

Փոքր ինչ անց դրկիցները նորից ներս թափվեցին խրճիթը....

Խելագար կինը—այլանդակ կերպարանքով, գզգզված մազերով, մոտեցրել էր կըրծքին երկու փոքրիկներին և այնքան պինդ էր սեղմում, կծոտելով նրանց համբուրում, որ նրանք սարսափահար եղած—«Վա՛յ, մայրիկ

ջան, մայրի՜կ ջան» էին կանչում։ Իսկ Աստղիկը մի անկիւնում կուչ եկած, հագուստի փէշերով աչքերը ծածկած, մղկտում էր....

Ամէն ինչ պարզ էր։

Դրսում արևը կրկին ազատվելով ամպերից շարունակում էր ջերմութիւն թափել թաց երկրի վրա։

Մի քանի անհոգ ճնճղուկներ նոյն խրճիթի տանիքի վրա նստած, իրանց ծլվլոցն էին գցել, որ միախառնվում էր այդ տանիքի տակից լսվող անտէր մնացած որբիկների հեկեկանքների հետ.....

ՎԵՐՋ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.Р.А Публичная Библиотека
7/II 1922
Мясникянъ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0323900

28628